№ 37 ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 4

1905

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՈՒՐԲԱԹ ՄԱՐՏԻ 4 № 37

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը 6 բուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Երկարատև, ծանր հիւանդութիւնից յետոյ փետրվարի 14-ին Պարիզում վախճանվեց

ՄԻՄԷՕՆ ՀԱԽՈՒՄԵԱՆ

որի վշտաբեկ այրին՝ Բալիցիա Հախումեան զաւակների հետ՝ յայտնում է ազգականներին և բարեկամներին, Հոգեհանգիստը կատարվելու է կիրակի, մարտի 6-ին, Վանքի մայր եկեղեցում 12 ժամին կէսօրվայ։ (ռ. կ.) 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Իշխան Ծերեթելիի յիշատակագիրը. Մամուլ. Ժողով Սև ծովի ափերի ծխախոտագործների մասին. Բագուի աղէտի զոհերի օգտին. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Մենք տուինք տեղեկութիւններ պատերազմական գաշտի դրութեան մասին և ասացինք, որ այս օրերս սպասվում են լուրջ պատերազմական գործողութիւններ։ Քաղաքական մամուլը մեզ չէ տալիս նոր լուսաբանութիւններ, որովհետև մանջուրական բեմի վրա դէպքերը այնքան արագ են կատարվում և միմեանց յաջորդում, որ մենք կարող ենք առ այժմ միայն հեռագիրներից քաղել մեր տեղեկութիւնները այնտեղ կատարվող գործերի մասին։

Քաղաքական մամուլը, աչքի առաջ ունենալով Հեռաւոր Արևելքի շրջանում տեղի ունեցած ծանրակշիռ ընդհարումները, նպատակայարմար է գտնում կանգնեցնել պատերազմը և ապարէզ հանել հաշտութիւն կնքելու խնդիրը։ Պատերազմը չափազանց արիւնահեղ է և կորուստները չափազանց մեծ են։ Որպէս զի կարելի լինի պատերազմը շարունակել, դարձեալ կը պահանջեն երկար ամիսներ, մինչև որ կը վերակազմվեն բանակները նոր ճակատամարտերի համար։ Ուրեմն պէտք կը գայ նորանոր ծախքեր անել և նոր զոհեր տալ, որոնց քանակը առանց այն էլ շատ ահագին է ներկայումս։

Այն ժամանակ, երբ ամբողջ աշխարհը յարված հետաքրքրութեամբ հետևում է Հեռաւոր Արևելքում կատարվող գործերին, նորից իր վրա ուշադրութիւն է գրաւում և Մերձաւոր Արևելքի այն մասը, ուր տեղի ունէին մակեդոնական յայտնի յուզմունքները։ Դարձեալ հանդէս են եկել ապստամբական խմբեր, որոնք յարձակումներ են գործում զանազան տեղերում։

Նորագոյն այդ շարժման մէջ դեր են կատարում թէ մակեդոնացիները, թէ բոլգարներ, սերբեր և յոյներ։ Նկատված է, որ յոյները զինվում են շատ տեղերում, բայց թէ ինչ ծրագրի են նրանք հետևում, բոլորովին դեռ պարզ չէ։ Յոյները ցանկանում են մի կողմից դիմադրել սլաւոնական տարրերին և այդ ցանկութեամբ նրանք նպաստում են Թիւրքական կառավարութեան նպատակներին, բայց միւս կողմից նրանք դիտաւորութիւն ունեն ապահովել իրանց համար Մակեդոնիայում ազդեցութեան ընդարձակ շրջան, իսկ այդ հանգամանքը շատ էլ ախորժելի չէ Թիւրքերին։ Յամենայն դէպս Մերձաւոր Արևելքը դեռ խաղաղված չէ և այստեղ կապված հանգոյցները դեռ պահպանել են իրանց ոյժի մի նշանաւոր մասը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑԻՇԱՏԱԿԱԳԻՐ

Դ. երկայացրած Քութայիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ Իշխան Ս. Դ. Ծերեթելիի կողմից նորին գործերի մինիստրին 1905 թի փետրվարի 19-ին

—

Աչքի առաջ ունենալով 1904 թի դեկտեմբերի 12-ի Անուանական ուկազում արտայայտված Բարձրագոյն կամքը պետական կեանքի զանազան մասերում արմատական բարեփոխութիւններ մտցնելու մասին և, դրա հետ միասին, ի նկատի ունենալով վրաց ազգաբնակութեան (Թիֆլիսի և Քութայիսի նահանգի) հնար չունենալը անմիջապէս մինիստրների կամիտէին հասցնելու իրանց իսկական կարիքների մասին, միաժամանակ երկրում էլ բացակայ լինելով ազատ մամուլը այդ կարիքները պարզելու համար, ես, ի պաշտօնէ մատ կանգնած լինելով ազգաբնակութեան բոլոր խաւերին, վստահութիւն եմ վերցնում ինձ վրա հետևեալ կերպով ձևակերպել ամենաանհրաժեշտ և կարևոր ճանաչված կարիքները։

1) Ցանկալի է փոփոխել Կովկասի կառավարութեան ձևը և դարձնել աւելի ապահով և բարեացակամ պետական քաղաքականութեան արտայայտիչ և, դրա հետ կապված, երկրի հոգեկան ուժերի անարգել զարգացումը և նիւթական կեանքի բարօրութեան աճեցողութիւնը, որը կը նպաստէր մասամբ իրար թշնամի տեղական ազգերի բարեկամանալուն և կը տոպէր նրանց ծառայել ընդհանուր հայրենիքի և համայն Ռուսաստանի օգտին։

2) Ներմուծել զեմստվոյական հիմնարկութիւններ այն հիմքերով, որ ակնարկված են դեկտեմբերի 12 ի ուկազի II կէտում, և նոյն յօդուածում նախատեսված՝ քաղաքային ինքնավարութիւնների իրաւունքների ընդլայնացումը։

3) Ներմուծել երդուեալ դատաւորների հիմնարկութիւնը և կանոնաւորել դատավարութիւնը՝ յատուկ բացնելով քաղաքացիական օրէնքները տեղական սովորութիւններին, բաքերին և կեանքի ձևին, նոյնպէս և թոյլատրել հաշտարար դատարաններում և ընդհանուր քրէական դատաստանի առաջին ատիճաններում դատերը վարել տեղական լեզուով։

4) Վերջնականապէս ոչնչացնել Վոստոտնում (Քութայիսի և Թիֆլիսի նահանգներում) ճորտական կախման մնացորդները։

5) Փոխել վարչական այն կարգադրութիւնները, որոնցով արգելվում է վրացի ազգաբնակութեանը բնակութիւն հաստատելու պետական ազատ հողերի վրա Անդրկովկասում։

6) Ոչնչացնել գործնական կեանքում արդէն ընդունված այն սահմանափակութիւնը, որով արգելվում է երկրի ընիկներին իրանց հայրենիքում մտնել և անցնել պետական ծառայութեան բոլոր մասերի մէջ և բոլոր աստիճաններում։

7) Ժողովրդական լուսաւորութեան գործից հեռացնել այն ամէն միջոցները, որոնք ձգտում են տեղացիներին բռնի ռուսացնել. տարրական դպրոցներում ուսումը տանել պարտաւորապէս վրացերէն լեզուով, որ միակ հասկանալի է ազգաբնակութեան համար. միջնակարգ դպրոցներում լուրջ կերպով կազմակերպել վրացերէն լեզուի, գրականութեան և պատմութեան դասաւանդութեան գործը. հիմնել Թիֆլիսում մի բարձրագոյն դպրոց, աւելի շուտ—համալսարան։

8) Հեռացնել վրացական կրօնական կեանքից այն բոլոր միջոցները, որոնք չեն հիմնված օրէնքի վրա,—այսինքն՝ վրացերէն լեզուի արտաքսումն ժամասացութիւնից Վրաստանի զանազան մասերից, օրինակ՝ Մինգրէլիայից և Սվանէթիայից. վրացի հոգևորականութեան իրաւունքների սահմանափակումը ընդհանուր կարգերով վարելու իրանց թեմերը և երիտասարդութեան կրօնական կրթութեան ղեկավարութեան գործում. վրացի ծագումի անձերի առաջ փակում են հոգևոր պաշտօնէութեան բարձր աստիճանները վրաց էկզարխութեան մէջ։

9) Տարածել Անդրկովկասի վրացի ազգաբնակութեան վրա դեկտեմբերի 12-ի Բարձրագոյն ուկազի նախատեսած այն բոլոր միջոցները և օրէնքները, որոնք վերաբերում են վարչութեան մէջ օրինականութիւնը ապահովելուն, անձի անձեռնմխելիութեանը, մասնաւորի ազատութեանը (թէ ռուսերէն և թէ վրացերէն լեզուներով), դատական և վարչական հիմնարկութիւնների կատարելագործութեան, զեմստվոների և քաղաքային ինքնավարութեան բարենորոգման, գիւղացիների և բանուորների կեանքի բարւոքման և միւս բոլոր հարցերին։

10) Ցիշված ազգաբնակութեանը թոյլատրել մասնակցելու բոլոր մտադրված բարեփոխութիւնների մէջ այն ձևով և այն հիմքերով, ինչով որ այդ մասնակցութիւնը թոյլատրվելու է ներքին նահանգների ազգաբնակութեանը։

Այդ 10 կէտերում ամփոփված խնդիրներին բաւարարութիւն տալը կը լինէր Վրաստանի վերաբերութեամբ կատարումն դեկտեմբերի 12-ի ուկազում արտայայտված Բարձրագոյն կամքին «վերանայութիւն անել այն գործող օրէնքների, որոնք սահմանափակում են... կայսրութեան առանձին վայրերի բնակիչների իրաւունքները»... (յօդուած 7-դ) և դրա հետ միասին, յիշատակութեան արժանի այդ ուկազի հիմնական գաղափարների ոգուն համաձայն։

Քութայիսի նահանգական ազնուականութեան պարագլուխ՝
Իշխան Ծերեթելի

ՄԱՄՈՒԼ

—

Այն օրվանից, երբ հրատարակվեց Բարձրագոյն հրաման ժողովրդի ընտրած ներկայացուցիչների մասին, որոնք պիտի մասնակցեն օրէնսդրական աշխատութիւններին, ռուսաց ամբողջ մամուլը մեծ ուշադրութեամբ քննում է մի շարք հարցեր, որոնք կապված են այդ ապագայ պետական հիմնարկութեան հետ։ Որոշ պաշտօնական ցուցմունքներ այժմ, ինչպէս յայտնի է, չը կան։ Յայտարարված է միայն սկզբունքը. իսկ մանրամասնութիւնները դեռ պէտք է մշակէ այն յանձնաժողովը, որ ներքին գործերի մինիստր Բուլիգինի նախագահութեամբ պիտի զբաղվէ այդ հարցով։ Այնուամենայնիւ, լրագիրները լիքն են զանազան լուրերով, դատողութիւններով, որոնք ձգտում են պարզել ժողովրդական ներկայացուցչութեան պատկերը, կազմակերպութիւնը, հանգամանքները։ Մնալով էնթադրութիւնների, գուցէ և որոշ տրամադրութիւնների աշխարհում, այդ լրագրական դիտողութիւնները արդէն շատ հանգամանքներ են շօշափել և լուսաբանել։ Այսպէս, ի միջի այլոց, յայտնված էր այն միտքը, թէ ներկայացուցիչները պիտի ընտրվեն միայն բուն ռուս ազգի կողմից, իսկ ուրիշ ազգութիւնները, որոնք կրում են ռուսների մէջ «այլազգի» (инородецъ) անունը, չը պիտի վայելեն ընտրողական իրաւունքներ։ Պաշտպանում են այդ միտքը պետական զանազան հայեացքների տեսակէտից, որոնք, մեծ մասամբ, հիմնված են նախապաշարմունքների և շովինիստական լեգենդների վրա։ Այդ նախապաշարմունքների դուռն ու ծուծը այն է, թէ Ռուսաստանի բոլոր այլազգիները ձգտում ունեն բաժանվելու ռուսաց պետական կազմակերպութիւնից։ Այդ առիթով «Одесс. Нов.» լրագիրը նկատում է.

Ասում են, թէ այլազգիները նոր ընտրական հիմնարկութեան մէջ թւով գերակշիռ կը հանդիսանան։ Այս բանը, ճիշդ որ, վտանգաւոր կը լինէր, եթէ մեր «այլազգիներին» մէջ սաստիկ զարգացած լինէր բաժանվելու, սեպարատիզմի զգացումը։ Բայց իրողութիւնն այն է, որ Ռուսաստանի մէջ բոլոր ազգութիւնները պետական ամբողջութիւնից քաղաքականապէս անջատվելու ձգտում այժմ իսկապէս չունեն։ Այդպիսի ձգտում աւելի քիչ կը լինի այն ժամանակ, երբ պետութիւնը այլազգիներին կը տայ բուն ազգաբնակութեան հետ հաւասար իրաւունքներ։ Եւ սակայն այլազգիների ներկայացուցիչներին նոր ընտրողական հիմնարկութեան մէջ կարող էր միացնել միմիայն այդ սեպարատիստական ձգտումը։ Միւս բոլոր հանգամանքների մէջ հող չը կայ նրանց միացման համար, այնպէս որ չէ կարող կասկած լինել, որ ամենամատ դէպքում բուն Ռուսաստանի ընտրեալների միաձոյլ բազմութիւնը կունենայ իր դիմաց այլազգիների բաժան-բաժան ներկայացուցչութիւնը, որ ոչ մի կերպ չէ կարող վտանգաւոր լինել պետական ամբողջութեան համար։

Լրագրի ցոյց տուած հանգամանքը, ճիշդ որ, ոչ մի կերպ չէ կարելի դասել երկիւղների շարքում։ Մի կողմ թողնելով այն հասարակ իրողութիւնը, որ բուն ռուս ժողովուրդը թւով անհամեմատ շատ մեծ է այլազգիներից, հետևաբար և ընտրողական հիմնարկութեան մէջ միշտ կունենայ ճնշող մեծամասնութիւն, մենք պէտք է ասենք, որ «երկիւղի» իսկական հիմքը—սեպարատիզմը գոյութիւն չունի Ռուսաստանի այլազգիների մէջ։ Ռուս ազգաբնակութեան հետ հաւասար իրաւունքներ տալը կը լինէր այն արմատական միջոցը, որ նոյն իսկ ենթադրութիւնների և լեգենդների շրջանից էլ արմատախիլ կանէր այդ «սեպարատիզմ» բառը, որով այնքան սիրում են խաղալ, թող փչել ռուս ազգայնամոլները։

ԺՈՂՈՎ ՍԵՎ ԾՈՎԻ ԱՓԵՐԻ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

—

Հորեքշաբթի, մարտի 3 ին, Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստում Ալ. Բալանթաբ կարդաց զեկուցում «Ծխախոտագործութեան վիճակը Սև ծովի ափերում»։ Բացի ընկերութեան անդամներից նիստին ներկայ էին Սև ծովի ափերի ծխախոտագործների և կալուածատէրերի ներկայացուցիչներ, Թիֆլիսի ծխախոտի գործարանատէրերից մի քանիսը և երկու սեռի բազմութիւն մինչև հարիւր հոգի։

Ա. Բալանթաբ իր զեկուցման մէջ բերեց մի շարք թւեր և ուրիշ տեղեկութիւններ ծխախոտագործների օգտաւէտ կուլտուրական գործունէութեան մասին, հաղորդելով, որ այդ ծխախոտագործների շնորհիւ տարեկան արդիւնաբերվում է մօտ 1 միլիոն պուդ ամենաբարձր տեսակի ծխախոտ, որ ունի միջին թւով 10 միլիոն բուբլու արժողութիւն։ Սակայն ծխախոտագործներին, իբրև թիւրքահպատակներին, իրաւունք չէ տրված ապրել Սև ծովի ափերում և նրանց հրամայված է թողնել իրանց տնտեսութիւնները և հեռանալ։ Զեկուցանողը թելով այն փորձերը, որ արել է Գիւղատնտեսական ընկերութիւնը անցեալում զարգացնելու ծխախոտագործութիւնը Կովկասում և առաջ բերելով այն հանգամանքը, որ ներկայումս մեր երկրի մէջ դեռ չը կան տարբեր, որոնք կարողանային փոխարինել թիւրքահպատակ ծխախոտագործներին, առաջարկեց, որ Գիւղատնտեսական ընկերութիւնը դիմէ բարձր կառավարութեան և մինիստրներին, խնդրելով, որ ծխախոտագործներին տրվեն նոյն արտօնութիւնները, ինչ որ սահմանված է Սև ծովի ափերում հաստատված հանքատէրերի և գործարանատէրերի համար։

Զեկուցման քննութեան մէջ մասնակցութիւն ունեցան գիւղատնտեսներ, ծխախոտագործներ, կալուածատէրեր և գործարանատէրեր։

Դեմենտիեվ այն միտքն էր յայտնում, որ ծխախոտագործութիւնը ուժասպառ է անում հողը և հարց էր տալիս, թէ ինչու թիւրքահպատակները չեն ընդունում ռուսահպատակութիւն։ Բցխիլաձէ հարց է տալիս, թէ արդեօք Թիւրքիայի ծխախոտագործների շնորհիւ չի՞ պակասի այն հողերի քանակը, որ կարող էր հարկաւոր լինել կովկասեան սակաւահող գիւղացիների համար։

Բալանթար բացատրեց, որ ծխախոտի այժ սպառող յատկութիւնը չէ կարող ազդել յարուցած հարցի լուծման վրա, որովհետև այժ խնդիրը ծխախոտի մասին չէ ընդհանրապէս։ Ինչ վերաբերում է սակաւահողութեան հարցին, պէտք է նկատել, որ ծխախոտագործները հաստատվել են ոչ թէ արքունական, այլ մասնաւոր հողերի վրա և որ արքունական հողերը ազատ են գիւղեր կազմելու համար։

Ա. Էնֆիաճեանց մանրամասն կերպով բացատրեց այն մեծ օգուտները, որ տալիս է Սև ծովեայ ծխախոտագործութիւնը երկրին և մասնաւորապէս գործարանատէրերին։ Մանաւանդ նա մեծ նշանակութիւն է տալիս ծխախոտի «Սամսոն» տեսակի արդիւնաբերութեան, որ կարևոր նշանակութիւն ունի Ռուսաստանի համար։

Իշխան Պ. Շերվաշիձէ, որն ունի ընդարձակ կալուածներ Սուխումի շրջանում, յայտնեց թէ միայն և միայն թիւրքահպատակների շնորհիւ հնարաւոր եղաւ շենացնել և կենդանացնել Սև ծովի ափերը, որոնք լեռնականների չուելուց յետոյ մնացել էին ամայի, անբնակ և դարձել էին բոլորովին ապարդիւն տեղական կալուածատէրերի համար։ Ճիշդ է, վերջին տարիների ընթացքում կառավարութեան ջանքերով այնտեղ հիմնվեցին ռուսական գիւղեր, սակայն ռուսները բոլորովին ընդունակ չեն վարելու իրանց տնտեսութիւնը այնպէս, ինչպէս պահանջում են երկրի պայմանները և նրանք անկարող լինելով մշակել իրանց հողերը, դարձեալ դիմում են թիւրքահպատակներին և նրանց տալիս կապալով իրանց հողերը։ Եթէ թիւրքահպատակներ չը լինեն, ընդարձակ տարածութիւններ մնում կը լինեն նորից ամայութեան։

Ա. Յակոբեան (Սուխումի ծխախոտագործների ներկայացուցիչ) յայտնեց, որ գաղթական հայերը մեծ կուլտուրական գործեր են կատարել, առանց վերցնելու կառավարութիւնից նպաստ և ծախք, մինչդեռ չինացիները, որոնք հրաւիրված են թէյի մշակութեան համար, հազարներ են պահանջել։ Գաղթականները աւելի ևս ընդարձակ գործունէութիւն ունեցած կը լինէին, օրինակ, կը տարածէին կաղնու մշակութիւնը, որ նոյնպէս օգտաւէտ մի գիւղատնտեսական գործ է, սակայն նրանք անկարող են այդ անել, որովհետև հաստատ և կայուն դրութիւն չունեն երկրի մէջ։ Ինչ վերաբերում է հպատակութեան, նրանք կընդունէին ռուսահպատակութիւն, եթէ նրանց տրվէին հողաբաժիններ կանոնաւոր կերպով։

Ա. Սահակեան իր կողմից ցուցումներ տուեց թիւրքահպատակների օգտաւէտ գործունէութեան մասին և առաջարկեց, որ Գիւղատնտեսական ընկերութեան կողմից ներկայանայ մի պատգամաւորութիւն կովկասեան կառավարչապետի պաշտօնակատար գեներալ Մալամային, որպէս զի ծխախոտագործներին կարողութիւն տրված լինի չը զրկվել այս տարվայ բերքից։

Շարաֆեան (Սուխումի ծխախոտագործների ներկայացուցիչ) յայտնեց, որ թիւրքահպատակ ծխախոտագործների ներկայութիւնը օգտաւէտ է նաև Սև ծովի ափում հաստատված ռուս գիւղացիների համար և որ առաջիկայ բերքը շնորհիւ անորոշ դրութեան աւելի պակաս կը լինի, քան անցեալ 1904 թվին և ծխախոտի գինը երևի կը բարձրանայ։

Տիկին Սագարդա, Իսէյեանի և Նատրօեվ իրանց կողմից համակրութիւն յայտնեցին թիւրքահպատակների օգտաւէտ գործունէութեան առիթով և ցանկալի համարեցին անել այն դիմումը, որ առաջարկում է զեկուցանողը։

Ընդհանուր ժողովը միաձայն որոշեց ընդունել զեկուցման եզրակացութիւնները, իսկ կառավարչապետի պաշտօնակատարին ներկայանալու համար ընտրեց պատգամաւորութեան անդամներ, իշխան Պ. Շերվաշիձէին, Ն. Տարատինովին և Ա. Քալանթարին։

Նիստին նախագահող Ի. Մինամաղվարով ժամի 11-ին փակեց նիստը։

ԲԱԳՈՒԻ ԱՂԷՏԻ ԶՈՀԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք. 1) Զաքաթալայից, Մկրտիչ քահանայ Տէր-Մկրտչեանի ձեռքով հանգանակած առաջնորդարանի մանուկներին յանձնելու համար 85 ր., 2) Ե. Ա. Դանիէլբէկեանից (Մոսկվա) 5 ռուբլի, 3) Ն. Գէորգեանից (Կոկանդ) 5 ր., 4) Կոկանդի պանդուխտ հայերից Յովհաննէս Իսրայէլեանի ձեռքով հանգանակած 115 ր., 5) Կարապետ Քէօսէեանից (Մանսուլի պղնձի հանքեր) 3 ր., 6) Վերին-Ախտա գիւղի հասարակութիւնից, ծխատէր Յակոբ քահ. Տէր-Յակոբեանի ձեռքով հաւաքած 18 ր., 7) Մերելդա գիւղից Ա. Ա. Հէքիմեանի ձեռքով հանգանակած 93 ր. 50 կ., 8) Կողբից, Առաքել Սեֆիլեանի և Մատթէոս Տէր-Գէորգեանի ձեռքով հաւաքած 38 ր. 25 կ., 9) Կարսի քաղաքային դպրոցի աշակերտներից Սարիբէկ Տէր-Մելքիսեդէկեանի միջոցով 11 ր. 47 կ., 10) Դուշակ կայարանից Յակոբ Ա. Ղազիեանցի ձեռքով հանգանակած 23 ր., 11) Ծղնի գիւղից (Կաղզուանի շրջան) գիւղի հասարակութիւնից Ներսէս քահ. Դերջանեանի ձեռքով հաւաքած 20 բուբլի 32 կ., 12) Անդրբկասպեան Առևտրական ընկ. Մերվի բաժանմունքի ծառայողներից 5 ր., 13) Յակոբ Օհանեանից (Սուլին) 5 ր., 14) Թորգոմ Օհանեանից 1 ր., 15) Ալէքսանդր Յարութիւնեանից 50 կ., 16) Դաւիթ Յարութիւնեանից 50 կ., 17) Կ. Ասվատուրեանից 50 կ., 18) Մովսէս Յարութիւնեանից 50 կ., 19) Դր. Թաթոսեանից 25 կ., 20) Պրոֆէսօր Դ. Ա. Խալաթեանից (Մոսկվա) 25 ր., 21) Տատել գիւղի հասարակութիւնից Ղ. Վարդապետեանի ձեռքով հաւաքած 28 ր. 3 կ., 22) Ուզունեանից (Լոզովայա Պավլովկա) 22 ր. 25 կ., 23) Եասինովատայա կայարանից Մ. Մուրադեանի և Ն. Խալաթեանի ձեռքով հաւաքած 32 ր., 24) Իվան Դ. Դավիդովից (Արմեանսկ) 65 ր., 25) Նոր-Նախիջևանի թեմական դպրոցի աշակերտներից հաւաքած Ք. Փորշեանից 32 ր. 25 կ., 26) Դէօրգիեվսկից Ներսէս քահ. Վարդանեանի ձեռքով հանգանակած 10 ր., 27) Կանավինոից Դաւիթ Տէր-Զաքարեանի ձեռքով հանգանակած 83 ր., 28) Բուխարա կայարանից (Սարա Քարվան Բաշի) Ստ. Տէր-Միքայէլեանի ձեռքով հաւաքած 26 ր. 60 կ., 29) Սիմֆերոպոլից Խ. Վարդանեանի ուղարկած երգեցիկ խմբի անդամներից առաջնորդ. մասնաժողովին յանձնելու համար 50 ր., 30) Ծէբէլդայից Գ. Թոփչեանի ձեռքով հանգանակած 21 ր., 31) Մերվից Վ. Ապրէսեանի ձեռքով հաւաքած 35 ր. 20 կ., 32) Նոր-Նախիջևանից Պողոս քահ. Բէյէլեանի և Մկրտիչ քահ. Տէր-Յակոբեանի ձեռքով հանգանակած 72 ր., 33) Նոր-Բուխարայից Մկ. Մանուչարեանի ձեռքով հաւաքած առաջնորդական մանուկներին յանձնելու համար 36 ր., 34) Եղբ. Վարունցեաններից (Շուշի) 10 ր., 35) Ախալքալաքից Յ. Սամարճեանի, Խ. Կարապետեանի, պ. Ալթունեանի և Կ. Զրպետեանցի ձեռքով հանգանակած (առանց խտրութեան կրօնի և ազգութեան) 217 ր. 40 կ., 36) Սաթխայ գիւղի հասարակութիւնից Ստ. Տէր Գրիգորեանի ձեռքով հաւաքած առաջնորդական մանուկներին յանձնելու համար 26 ր., 37) Տիկին Բէգ—Այվազեանի ձեռքով տիկիններից հաւաքած 13 ր., 38) Սուրբալու գաւառի Փոնիկ գիւղի հասարակութիւնից Ս. ք. Տէր-Ա հարոնեանի ձեռքով հանգանակած 31 ր., 39) Վաղ. Կարինեանից (Բօրչխա գիւղ) 2 ր., 40) Ախալցխայի Ծղրութ գիւղի հասարակութիւնից մի քանի երիտասարդների ձեռքով հաւաքած 64 ր., 41) Խանլուխալար գիւղի հասարակութիւնից 60 ր., 42) Ներքին Ախտայի առևտրական երիտասարդութիւնից Ռ. քահ. Տէր-Գէորգեանի և Բ. Աբգարեանի ձեռքով հաւաքած 40 ր., 43) Կ. Վարդանեանից (Եալթա) 1 ր., 44) Համզաչիմանից Հ. Զօլոխեանի ձեռքով հաւաքած առաջնորդական մանուկներին յանձնելու համար 10 ր. 10 կ., 45) Մեծ Ղարաքիլիսայից Աւետիս Աղաբաբեանի ձեռքով հաւաքած ծան թների շրջանում 12 ր. 15 կ., 46) Եղէշէդիք գիւղի հասարակութիւնից Արշ. Առաքելեանի ձեռքով հանգանակած 10 ր., 47) Ախեցիկ գիւղից (Չիբրայէլի գաւառ) Գաբրիէլ Բալիեանցի ձեռքով հաւաքած 5 ր., 48) Աղբուլաղու հասարակութիւնից 10 ր., 49) Զանգեզուրի (Աւետարանոց) գիւղում հոգեհանգստի ժամանակ հաւաքած 12 ր. 3 կ., 50) Նիսվիթա գիւղից (Նոր-Նախիջևանի շրջան) հոգեհանգստից յետոյ մասնաւոր հանգանակութիւնից 3 ր. 30 կ., 51) Թոփտի գիւղից (Նոր-Նախիջևանի գաւառ) Վարդան Զուբարեանի ձեռքով հաւաքած 11 ր., 52) Ղարասուբազարից տիրուհի Ովսաննա Ասրեանի ձեռքով հաւաքած 150 ր., 53) Սուխում-Ղալէից Յ. Ահարոնեանի, Զ. Ծատուրեանի և Գ. Բուզեանի ձեռքով հանգանակած 129 ր. 36 կ.։ Ընդհանուր գումարը նախկին ստացածների հետ միասին 12,732 բուբլի 21 կոպէկ։

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՄԲԱՍԴՐՈՒԹԵԱՆ

I

Կոկանդ, փետրվարի 22-ին

Բագուի սոսկալի աղէտի գոյժը ցնցեց Կոկանդում գտնված պանդուխտ հայերիս։ Անհամբեր սպասում ենք այդ ողբերգական տեսարանի վարագոյրը բացված տեսնել մամուլի էջերում։ Խորին վիշտ և ցաւակցութիւն յայտնելով դժբախտացածներին, ողբում ենք նրանց դառն և անսպասելի կորստեան համար, անմոռանալի կսկիծով։ Լցված սրտով, յուզված մտքով, եղբայրսիրութեան զգացմունքով լցված, շտապում ենք ուղարկել ի նպաստ դժբախտացածների մեր չնչին լուման, որ տուել են հետևեալ անձինք.

Օր. օր. Ե. Այտաճեան 10 ր., Հ. Գասպարեան 2 ր., պ. Ա. Բէգլարեան 10 ր., տիկին Ս. Քօչարեան 3 ր., Գ. Իսրայէլեան 2 ր., Ս. Բարաջանեանց 2 ր., պ.պ. Գէորգեանց, Ոսկ, Բ. Քօչարեան, Զ. Տէր-Զաքարեան, Դ. Տէր-Զաքարեան Յ. Մ. Առաքելեան, Հ. Զալախեան, Բ. Յակոբեան Յ. Գասպարեան, Կ. Աւագեան, Մ. Աթաբէկեան 5 ական բուբլի. Մ. Շանազարեանից և ծառայողից 4 ր. 50 կ., Խ. Աղախանեան, Ա. Գասպարեան, Պ. Բաբաջանեան, Յ. Զաքեան 3 ական բուբլի. Ս. Գաբրիէլեան, Զ. Զարգարեան, Բ. Աւանէսեան, Վ. Ասիլեան, Մ. Սալամբէկեան 2-ական բուբլի. Թ. Տէօխճեան, Խ. Ազնաուրեան, Ս. Յակոբեան 1-ական բուբլի. մէկական 2 ր.։ Ընդամենը 115 ր. 50 կոպ.։ Դուրս գալով ծախս 50 կոպէկ, փոխադրում եմ պոստով 115 բուբլի։

Ի դիմաց մեր պանդուխտների՝

Յ. Իսրայէլեանց

II

Նոր-Մարգելան, փետրվ. 25-ին

Սոսկում է մարդ, երբ երևակայում է Բագուի զարհուրելի աղէտը։ Յանկանալով գոնէ նիւթականապէս փոքր օգնութիւն ցոյց տալու գաղանութիւնների զոհ գնացած չարաբաղդ ընտանիքներին և որբերին, ուղարկում ենք 72 բուբլի, խնդրելով յատկացնել Բագուի աղէտի հայ զոհերի օգտին։ Հաւաքված է ներքև յիշված անձինքներից։

Ս. Միքայէլեան, պ. Սարուխանեան, Բաբախանեան, Գ. Գրիգորեանց, Գ. Մէհուրճէլեանց, Հ. Զաքեանց, Աղաջանեանց, Ղ. Աբովեանց, Գ. Զաւախեան, Մ. Միրզոյեանց 3-ական բ., Մ. Ստեփանեանց, Թ. Առուստամեան, Լ. Աւետեան, Պ. Գրիգորեան, Ա. Ստեփանեան, 2-ական բուբլի. Ս. Շանվէրդեան, Հ. Իսայեան, Ա. Աւետեան, Դ. Ղազեան, Ա. Յովսեփեանեան, Ա. Ահարոնեան, Պ. Մալեան, Յ. Զալեան, Կ. Սափարեան, Գ. Աղաբէկեան, Ա. Աբկարեան, Մկրտչեան, Ա. Գաղախեանց, Խ. Ղուկասեան, Գ. Գրիգորեան 1-ական բուբլի. Դ. Պետրոսեան, Փ. Հայրապետեան, Խ. Սհակեան, Մ. Մուսայելեան, Ա. Քարամեան, Ն. Իսրանդարեան, Շ. Խիթարեան, Ա. Միրաքեան, Ա. Յարութիւնեան, Ս. Այվազեան, Ս. Ազնաուրեան 50 ական կոպէկ. Ս. Զաւախեան 5 ր., մի խումբ զինուորներից Մ. Խաչատուրեանցի միջոցով 5 ր., Ի. Առաքելեան 1 ր. 50 կոպէկ։

Ի դիմաց նուիրողների՝

Ս. Միքայէլեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Փետրվարի 24-ին, ցերեկվայ ժամը 3-ին Պետերբուրգում՝ ներքին գործերի մինիստր Բուլիգինի հրաւէրով, մինիստրին այցելութեան գնաց Կովկասի նոր փոխարքայ կոմս Վորոնցով Դաշկովը։

Երէկ, մարտի 3-ին, մի յատուկ պատգամաւորութիւն, որ ընտրված էր Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան կողմից, ներկայացաւ Կովկասեան կառավարչապետի պաշտօնակատար գեներալ-լեյտենանտ Մալամային խնդրելու արտօնութիւններ Սև ծովի ափերում գտնվող թիւրքահպատակ հայ, յոյն և թիւրք ծխախոտագործների համար։ Պատգամաւորութեան անդամներն էին՝ իշխան Պ. Շերվաշիձէ, Ն. Տարատինով և Ա. Քալանթար։ Լսելով մանրամասն զեկուցում, կառավարչապետի պաշտօնակատարը յայտնեց, թէ ինքը հակակրութեամբ է վերաբերվում թիւրքահպատակ ծխախոտագործների գործունէութեանը և իր կողմից կաջակցէ ձեռք բերելու ծխախոտագործների համար արտօնութիւն։

Կայսերական պալատի հօֆմէյստէր, Թիֆլիսի նախկին նահանգապետ իշխան Գ. Դ. Շերվաշիձէն այս ամսին Թիֆլիս է գալիս։ Ինչպէս հաղորդում են «Т. Л.» լրագրին Պետերբուրգից, իշխան Շերվաշիձէն բարձր պաշտօն է ստանում Կովկասի վարչութեան գործում—այսինքն՝ Կովկասի փոխարքայի քաղաքացիական մասի օգնական։ Կովկասի փոխարքայութեան մէջ մտադրութիւն կայ, բացի զինուորական և քաղաքացիական օգնականներից, ստեղծել նաև ամբողջ Անդրկովկասի ոստիկանական մասի կառավարչի պաշտօն։

Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Վերմիշեանը ստացել է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսից մի կոնդակ, որով Նորին Օծութիւնը ուղարկում է իր հայրական օրհնութիւնները թէ պ. Վերմիշեանին և թէ նրա հետ միասին այն բոլոր անձերին, որոնք իրանց ջանքը գործ են դրել Բագուի դրացի ազգութիւններին խաղաղացնելու և սարսափներին վերջ դնելու համար։

Ինչպէս տեղեկացել է «Echo de Paris» լրագիրը, Ռուսաստանի ներքին գործերի մինիստր Բուլիգինը վճռական կերպով կարծիք է յայտնել «Զեմսկի Սոբոր» կազմելու մասին։ Փետրվարի 18-ի Բարձրագոյն ըէսկրիպտի համար եղած մինիստրների կոմիտէի նախնական նիստերում, ուր մեծամասնութիւնը բռնեց ժողովրդական ներկայացուցչութեան կողմը,—այդ ժողովներում չը կար կոմիտէի նախագահ Ս. Ի. Վիտտէն, որը դէմ է Զէմսկի Սոբորին այժմեան առաջարկված ձևով։ Այդ բացակայութիւնից արդէն երևում է, որ նա ուզում է քաշվել պետական գործերից, ինչպէս արդէն անցած դեկտեմբերին ցանկութիւն էր յայտնել։

—

Այսօր «Շախսէյի» օրը՝ շէյխ ուլ-իսլամը խնդրել է Թիֆլիսի ոստիկանապետին, որ քրիստոնեաներին թոյլ չը տրվի ներս մտնելու մզկիթի շրջապարսպի մէջ։

—

Լսում ենք, որ Թիֆլիսի մեշչանների լիազօրներն իրանց մասնաւոր խորհրդակցութեան ժամանակ որոշել են մեշչանների աւագի կանդիդատ նշանակել Ս. Ա. Դանդուրեանին և աւագի ռոճիկը հասցնել տարեկան մինչև 3000 բուբլու։

—

Անդրկովկասի երկաթուղու վարչութիւնը կարգադրութիւն է արել ամբողջ գծի վարչութիւններին, որ ձրի տոմսակներ տան այն բանուորներին հայրենիք վերադառնալու, որոնք իրանց հաշիւները մաքրել են և ցանկանում են հեռանալ երկրից։ Տոմսակ տրվելու է, ոչ միայն մինչև Կովկասի սահմանները, այլ և մինչև բնակավայրերը, երկաթուղիների ամբողջ ցանցի վրա։

—

Թիֆլիսում անցեալ օրերը լուր ստացվեց, որ Բօրչալուի գաւառի Շահնազար գիւղում թուրքերի և հայ-կաթոլիկների միջև ընդհարում է տեղի ունեցել և սպանութիւններ են կատարվել։ Թէ՛ այդ ամենը առաջացել է զուտ անհատական հաշիւների ու կռիւների հողի վրա, բայց և այնպէս Թիֆլիսի նահանգապետը, աչքի առաջ ունենալով, որ չարամիտ մարդիկ կարող են հեշտութեամբ դրան տալ ցեղական և այլ բնաւորութիւն, խնդրեց շէյխ-ուլ-իսլամին խաղաղացնելու միջոցների ձեռնարկել։ Անցեալ օրը շէյխ-ուլ-իսլամը պատասխանել էր պ. նահանգապետին, որ Շահնազար գիւղը թէև բացառապէս հայերից է բաղկացած, բայց և այնպէս ինքը գրել է Բօրչալուի զաղիին հարկաւոր միջոցները ձեռք առնել։

—

Պետերբուրգում վերջին օրերը կայացել է բոլոր արհեստի ինժենէրների ընդհանուր ժողով լեռնային ինժենէր Լուտուգինի նախագահութեամբ։ Նախագահը յայտնեց, որ քաղաքապետը թոյլ է տուել ինժենէրների դաշնակցութեան ժողովներն այն պայմանով, որ նրանց ներկայ լինեն և ոստիկանութեան ներկայացուցիչները։ Ժողովը, ասում է «Р. В.» լրագիրը, աչքի առաջ ունենալով փետրվարի 18-ի Բարձրագոյն ուկազը, զբաղվեց այն պայմանների քննութիւնով, որոնցով կարելի է Ռուսաստանի ներքին կեանքի մէջ խաղաղութիւն մտցնել։ Յետոյ ժողովը անցաւ ներկայ գործադուլի հարցին։ Մատնացոյց արին, որ աշխատաւոր դասակարգի վիճակը ներկայումս անտանելի է. սովը բանուորների մէջ լուրջ չափեր է ընդունում. Շիդլովսկու յանձնաժողովի գործունէութեան դադարումը կարող է վատ հետևանքներ ունենալ բանուորների համար, մինչև իսկ պատակել նրանց։ Քննվեց նոյնպէս մի քանի «ընտրող» բանուորների ձերբակալութեան խնդիրը. այդ առիթով ժողովը հետևեալ եզրակացութեանը յանգեց. ինժենէրների խորհուրդը՝ լսելով Շիդլովսկու այժմ փակված կօմիսսիայի հետ կապված՝ վարչութեան մի քանի արարքները և ընդունելով լիակատար օրինաւորութիւնը և անհրաժեշտութիւնը բանուորների պահանջների—անձի անձեռնմխելիութեան, խօսքի և ժողովների ազատութեան—եկան այն եզրակացութեան, որ առանց այդ պայմանների անկարելի է լուծել բանուորական խնդրի դժուարութիւնները. ինժենէրների դաշնակցութիւնը ներկայումս բողոքում է բանուորների ներկայացուցիչների ձերբակալութեան դէմ, որոնք ընտրված էին Շիդլովսկու յանձնաժողովի մէջ մասնակցելու համար, նոյն իսկ նախագահի առաջարկով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Գենեռալ Կուրոպատկինի հարցը։ «Times» լրագրի թղթակցի խօսքով Պետերբուրգում գումարվող զինուորական խորհուրդը պէտք է վճռէ այն հարցը, թէ հարկաւոր է արդեօք յետ կոչել գենեռալ Կուրոպատկինին և ում պէտք է նշանակել նրա յաջորդ։ Իբրև փոխանորդներ անուանում են երկու անձն՝ մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչին և գենեռալ-ադիւտանտ Դրագոմիրովին։ Պետերբուրգ է եկել գենեռալ Սուխոմլինովը։ «Temps» լրագիրը ասում է, թէ նրա այժմ Պետերբուրգ գալու նպատակի մասին ճշգրիտ տեղեկութիւններ չը կան։ Յայտնի չէ, գործը վերաբերում է գենեռալին զինուորական մինիստր, թէ մանջուրական բանակի գլխաւոր հրամանատար նշանակելուն։ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչը իր պալատում մի ճաշ տալով Կովկասից Մանջուրիա գնացող 48 կօզակ օֆիցէրներին, կենացների ժամանակ հետեւեալ խօսքերն ասաց. «Ցտեսութիւն, բայց շուտով»։ Դրանից եզրակացնում են, որ Մեծ Իշխանը կը պատահէ յիշեալ օֆիցէրների հետ Մանջուրիայում։ (Ե.)

Չինացիները օգնում են եապօնացիներին։ Արժանահաւատ տեղեկութիւնների հիման վրա եապօնական գործող բանակի մէջ գտնվում են 70,000 չինացի լաւ վարժված զինուորներ։ Հետզհետէ, եապօնական մարզիչների ղեկավարութեամբ նրանց տուին ռազմական պատրաստութիւն և զինաւորեցին նորագոյն սիստեմի հրացաններով։ Այդ բոլորը, ինչպէս և չինական այդ ռազմիկ ոյժերի հետզհետէ մրցելը եապօնացիների զանազան զինուորական մասերի մէջ, կատարվում էր վերին աստիճանի գաղտնապահութեամբ։ Ահա ինչու Մանջուրիայի եապօնական բանակի քանակութիւնը յանկարծ այնքան ահագին դարձաւ։ (Б. В.)

Կուրօկիի ծրագիրը։ «Echo de Paris» լրագրի Պետերբուրգի թղթակիցը հաղորդում է, որ Պետերբուրգի զինուորական ձեռնոց շրջաններում երկիւղ է տիրում, թէ Կուրօկին մտադիր է կամաց-կամաց առաջ խաղալ Սինուսինպին—Դիրինի ուղղութեամբ։ Շարժումը այդ ուղղութեամբ, երբ միաժամանակ եապօնական զօրախմբերը կը գործեն Մանգուլիայի սահմաններում, անպատճառ կը ստիպէ Կուրոպատկինին նահանջել դէպի հիւսիս։ Գրաւելով Տէլինը—«Մանջուրական Թերմօպիլները»—եապօնացիները, հնարաւորութիւն կը ստանան ոյժերի աննշան քանակութեամբ յետ պահել Կուրոպատկինի արշաւումը դէպի հարաւ և կը տրել նրա հաղորդակցութիւնը Վլադիվոստոկի հետ։ (Ե.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 մարտի

ՏՈԿԻՕ, 28 փետրվարի։ «Ցէնտրալ Նիւս» լրագիրը հաղորդում է, որ շատ ռուսներ թաղված են չինական տներում։ Ոչինչ յայտնի չէ թէ որտեղ է գտնվում գենեռալ Կուրոպատկինը։ Կուի առաջին փաղիսի ժամանակ նա գտնվում էր Ֆուշունում, և ասում են, որ տեղեկութիւն ստանալով Մուկդէնին սպառնող վտանգի մասին, վերադարձաւ այնտեղ զօրեղ օգնական զօրքով. բայց տեսնելով, որ դրութիւնը կրիտիքական դարձաւ, հրամայեց սկըսել ընդհանուր յետ նահանջումն։ Ինքն գենեռալը զօրքի մի անշան մասով գնաց, նախքան եապօնացիները կարեցին հաղորդակցութիւնը երկաթուղիով։ Ֆուշունից յետ նահանջող ռուսական զօրքերը շրջապատված են 20 մղոն դէպի հիւսիս։ Ենթադրում են, որ կռիւը կը տեւէ դեռ մի քանի օր։—Գիտենալով, որ Տէլին ի բերդապահ զօրքը բաղկացած է 50,000 մարդուց, այնտեղ քննում են այն հարցը, թէ արդեօք եապօնացիները անյապաղ կը սկսի՞ն արշաւանքը, թէ հնարաւորութիւն կը տան զօրքերին հանգստանալ։ Ներկայումս զօրքերը զբաղված են ռուսներին հալածելով, որոնք սովի և յոգնածութեան պատճառով չեն կարողանում դիմադրութիւն ցոյց տալ։

ՍԻՆՄԻՆՏԻՆ։ Մուկդէնի շրջականներում 10 օրվայ ընթացքում տեղի ունեցը մի չը տեսնված կոտորած։ Եապօնացիները մի քանի անգամ գրոհ էին տալիս ռուսական մասսաների վրա և վերջապէս պատռելով անցան նրանց միջից։ Տեղի ունեցաւ սարսափելի կոտորած։ Եապօնացիները օգուտ էին քաղում դիակների կոյտերից՝ իրանց արշաւանքը աջողեցնելու համար։ Կուի հետեւանքը մի քանի օր շարունակ անորոշ էր մնում, մինչև որ եապօնացիներին աջողվեց ռազմական մեծ շարժում կատարել և ռուսների թիկնակողմն անցնել։ Եապօնական զօրասիւնը գրաւեց այն դիրքը, որից կարող էր յարձակում գործել երկաթուղու վրա ռուսական աջ թեւի թիկնակողմում։ Կուրոպատկինի համարեա ամբողջ բանակը իրապէս շրջապատված է։ Ընդհատված է երթեւեկութիւնը սինմինտինեան երկաթուղիով։ Վագոնները մնում են Սինմինտինում։ Չը կայ ոչ մի շոգեկառք։ Վաճառականները մեծ մտահոգութեան մէջ են։ Վախենում են. սպասվում է եապօնական 20,000 զօրքերի գալուստը։ Ոչ մի իշխանութիւն չը կայ, որ հոգատանէ քաղաքի վիճակի մասին։ Աժեն բան կառավարում է եապօնական ցէնզօրը, որ կապիտանի աստիճան ունի։ Չինական իշխանութիւնները գլուխը կորցրել են։

ՊԱՐԻԶ։ Ծովապետ Դուբասով երէկ երեկոյեան Պարիզից ճանապարհ ընկաւ Պետերբուրգ։ «Ժուրնալ» լրագիրը հրատարակեց իր ժանջուրական թղթակից Նոգոի հեռագիրը, որը հաղորդում է, թէ ինքն գերի է բռնված Մուկդէնում և իրան ուղարկում են Եապօնիա։

ՄՕՍԿՎԱ, 2 մարտի։ Երէկ ուշ երեկոյեան Տէատրալնայա հրապարակի վրա աւազանի մօտ լսվեց խլացնող պայթիւն։ Մօտակայ պահակների ոստիկանները վազեցին պայթիւնի տեղը և բռնեցին շտապով հեռացող անծանօթ անձանց։ Պայթիւնի ոյժը այնքան մեծ էր, որ թուջեայ ծակոտկէն վանդակի կտորները պոկվել էին, իսկ հիմքը ճեղքվել էր։ Մի քանի րոպէից յետոյ պայթիւնի տեղի վրա խռնված էր ժողովուրդը, որը խիստ զբաղված էր երևում բռնվածների դէմ, որոնց ոստիկանատուն ուղարկեցին։ Շուտով եկան պրօկուրօրը և պօլիցիմէյստէրը, որոնք աչքի անցնելով պայթիւնի տեղը, գնացին հարցափորձի ենթարկելու բռնվածներին։ Վերջիններից մէկի ձեռքը վիրաւորված էր։ Ոչ մի հարցին բռնվածները պատասխան չը տուին, թողնելով բոլորովին չը պարզված։—Հաղորդում են, որ մթերքների սուր կարօտութիւն է երևացել մի քանի վօլոստներում։ Միջոցներ են ձեռք առնում։

ՀՌՕՄ, 2 մարտի։ Սաքսոնեան պրինց Եօհան-Գէօրգ, իր էկսկուրսիայի ժամանակ, կամենալով սարը բարձրանալ, ենթարկվեց գիւղացիների յարձակման, որոնք չէին կամենում թողնել, որ նա անցնէ ճանապարհով։ Վերջ ի վերջոյ պրինցը ստիպվեց վերադառնալ, որովհետև բոլոր խաղաղ յորդորները ապարդիւն անցան։ Վերջը իշխանութիւնները կալանաւորեցին մի քանի մարդու։ Երեկոյեան կայացաւ նախկին մինիստրների խորհրդակցութիւն Ֆօրտեսի նախագահութեամբ։ Վրճռված էր, որ Ֆօրտես կը ներկայացնէ պարլամենտին նախկին կաբինէտը իր նախագահութեամբ։

ՍԻՆԳԱՊՈՒՐ, 2 մարտի։ Եկան այստեղ արևելքից եապօնական 4 կրէյսէրներ։ Կարծուում են, որ դա եապօնական նաւատորմի առաջապահ մասն է։

ՍՕՖԻԱ, 2 մարտի։ Մակեդոնական կազմակերպութեան մէջ պառակտումն ընկաւ։ Ներքին կազմակերպութիւնն ընտրեց վարչութեան նոր անդամներ, նախագահ նշանակելով Գրուեվին. իսկ Սարաֆովը ստեղծում է նոր կազմակերպութիւն, որի գլխաւոր կորիզը կը լինեն Մակեդոնիայում գործող չետաները, ընդամենը 1000 մարդ։

3 մարտի

ՄՕՍԿՎԱ, 2 մարտի։ Բժիշկների Պիրոգովեան ընկերութեան վարչութեան մէջ ստացվեց քիմիկոս Ավերկիյ Իվանովի յայտարարութիւնը, որի մէջ ասում է, թէ գտել է միջոց խօլերան բժշկելու համար։ Վարչութիւնն առաջարկեց նրան փորձեր անել կլինիկայում։

ՍԻՆԳԱՊՈՒՐ, 2 մարտի։ Եապօնական «Կասագի» և «Զիտօզէ» կրէյսէրները, «Եավատամարու» և «Ամէրիկամարու» օժանդակ նաւերով եկան արևելքից։

ՎԻԵՆՆԱ, 2 մարտի։ Բէլգրադից հաղորդում են, որ օսմանեան բանկի դիրեկտօր Նավիլ յայտնեց ֆինանսների մինիստրին, որ Ֆրանսիան կարող է մասնակցել սերբիական փոխառութեան բէալիզացիայի մէջ միայն այն դէպքում, եթէ Սերբիան կը պատւիրէ Ֆրանսիայում նոր թնդանօթներ։ Պաշու համաձայնվեց, թէպէտ և այդ խոստման պատճառով վախենում են, որ տարաձայնութիւններ կարող են ծագել զինուորական մինիստրի հետ։

Կ. ՊՕԼԻՍ, 2 մարտի։ Բ. Դուռը գաղտնի տեղեկութիւններ ստացաւ, որ Սալոնիկի յունական ընդհանուր հիւպատոսարանում գաղտնի պահվում են զէնք և ռազմամթերքներ, որոնք նշանակված են յունական հրոսակների համար։ Բ. Դուռը ուղարկեց յունական կառավարութեանը եռանդոտ յայտագիր բողոքելով իրերի այդպիսի կարգի դէմ։—Արաբական ցեղերը պաշարել են Սանաա, Եմենի մայրաքաղաքը։ Ցէվֆիկ-փաշան, Սանայի զինուորական նահանգապետը, սպանված է։ Զինուորական մինիստրը դիտաւորութիւն ունի Եմէն ուղարկել եօթ բատալիոն։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մինիստրների կօմիտէտը քննում էր Ս. Գիրքը մալօրօսիերէն լեզուով հրատարակելու համար եղած սահմանափակող միջոցները վերացնելու հարցը։ Կօմիտէտը կարծում է վերացնել սահմանափակող միջոցները, որոնք սահմանված են Սուրբ Գիրքը հրատարակելու համար մալօրօսիերէն լեզուով, այն պայմանով սակայն, որ այդպիսի իւրաքանչիւր հրատարակութեան համար խնդրէ Սրբազան Սինոդի օրհնութիւնը։ Կօմիտէտի որոշումը արժանացաւ Բարձրագոյն հաստատութեանը ներկայ տարվայ փետրվարի 25-ին։

3 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մօսկվայի Կայսերական գիւղատնտեսական ընկերութիւնը յունվարի 14-ի իր ժողովում, մտնելով հասարակական վերջին ժամանակների հարցերի քննութեան մէջ, վճռեց. բողոք յայտնել կառավարութեան այն միջոցների համար, որ նա ձեռք առաւ Պետերբուրգում յունվարի 9 ին ծագած անկարգութիւնները զսպելու գործում, պահանջելով անյապաղ մտցնել Ռուսաստանում կառավարութեան ընտրողական ձև, դրա հետ միասին ժողովը որոշեց հաղորդել այդ որոշումը բոլոր նահանգական և գաւառական զէմստվոների վարչութիւններին, բոլոր քաղաքային դումաներին, վոլոստների վարչութիւններին և բոլոր գիւղատնտեսական ընկերութիւններին։ Երբ երկրագործութեան մինիստրը ներկայացրեց իր ամենահպատակ զեկուցումը, Թագաւոր Կայսրը բարեհաճեց Բարձրագոյն հրամայել փետրվարի 28-ին՝ զրկել Մօսկվայի գիւղատնտեսական ընկերութիւնը «Կայսերական» կոչվելու իրաւունքից։

ՕԶՈՒՐԳԷԹ։ Կառավարչապետի խորհրդի անդամ Սուլթան-Կրիմ-Գիրէյը, որ ուղարկված է շրջելու Գուրիայում, ման է գալիս գուրիական գիւղերը, ժողովներ հրաւիրելով և լսելով ազգաբնակութեան պահանջները։

ԲԵՐԼԻՆ։ Սօցիալիստ Ֆոլմարի յարձակման առիթով Գերմանիայի քաղաքականութեան վրա Ռուսաստանի վերաբերութեամբ, կոմս Բիւլովը յայտնեց ռայխստագում, որ հռետորը կասկած յայտնեց թէ արդեօք Ռուսաստանը կարող է պահպանել մեծ պետութեան դիրքը, բայց ինքն իր կողմից ենթադրում է, հակառակ սօցիալիստ պատգամաւորի կարծիքին, որ Ռուսաստանն իբր մեծ պետութիւն, պատւով դուրս կը գայ իր այս ծանր վիճակից։ Ըստ երևոյթին՝ սօցիալիստները կը ցանկանային Գերմանիային դրդել պատերազմելու Ռուսաստանի հետ, որպէս զի օգնեն իրանց ռուս համակրածիք անձերին։ Գերմանիան ոչ մի կախում չունի Ռուսաստանից, իսկ միւս կողմից ոչ մի պատճառ չունի թշնամի լինելու սլաւոնական մեծ պետութեան հետ։ Ինչ վերաբերում է նաւեր գնելու հարցին, Բիւլով յայտնեց, որ երկու թշնամի պետութիւնները ձեռք են բերել նաւեր Անգլիայում և Գերմանիայում, որ կատարելապէս թոյլատրվում է միջազգային իրաւունքով։ Գերմանիայի գործունէութեան եղանակը անպայման ճշդապահ է պատերազմի վերաբերութեամբ Հեռաւոր Արևելքում։ Եապօնիան գիտէ, որ նա կարող է յոյս դնել Գերմանիայի չէզոքութեան վրա և կը յարգէ գերմանական իրաւունքները արեւելեան Ասիայում։ Կանցլերը վերջացնում է իր ճառը հետեւեալ խօսքերով. «Գերմանիան ցանկանում է լաւ յարաբերութիւններ պահպանել Ռուսաստանի հետ և դիտաւորութիւն չունի թշնամութիւն անել Ռուսաստանին, որովհետև դա չէր համապատասխանի ում և է շահերին։—Արտաքին գործերի պետական քարտուղար Ռիխտհօֆէն հաղորդեց, որ պրուսական և բավարական կառավարութիւնները դիտաւորութիւն չունեն հրաժարվելու դաշնագրից Ռուսաստանի հետ քաղաքական յանցաւորներին յանձնելու վերաբերմամբ։ Արդէն 20 տարի է, որ քաղաքական նկատումներով յանձնումը տեղի չէր ունենում։ Դաշնագիրներն ունէին այն շահաւէտ կողմը, որ քաղաքական յանցաւորները հեռու էին պահում իրանց գերմանական սահմաններից։

ՏՕԿԻՕ։ 1 մարտի։ Եապօնացիները, որոնք նեղում են այժմ ռուսներին, գտնվում են 5 մղոն Տէլինից հեռու։ Շատ կարևոր դիրքեր հարաւում գրաւված են։ Սպասում են Տէլինի առմանը։ Եապօնական ֆինանսիստները հաշւում են Ռուսաստանի Ճապոնները, որ նա ունեցել է պատերազմի պատճառով, երկու հազար միլիոն ռուբլի։ Մարտի 2-ին։ Յոգնած, ուժասպառ ռուսները, տանելով իրանց հետ վիրաւորներին, շարունակում են նահանջել դէպի Կայլուան, ուր նրանք, ինչպէս երևում է, մտադիր են դիմադրութիւն ցոյց տալ եապօնացիներին, թէպէտև այնտեղ գտնվող ամրութիւնները բաւարար չեն։—Միկադօի գվարդիայից մի օֆիցէր նկարագրում է մեծ ճակատամարտի սկիզբը, որ բաղկացած էր մի շարք կատաղի գիշերային յարձակումներից։ Մի անգամ ռուսները գիշերով ապշեցուցիչ քաջութեամբ երեք հակա-յարձակումներ գործեցին, դիմելով սուինամարտի։ Ռուսները, նշանաւոր չափով օգնութիւն ստանալով, թեւակոխմի կրակ բացին եապօնացիների վրա, որոնք մեծ կորուստներ ունեցան և ստիպված էին յետ քաշվել, իսկ յետոյ ռուսները տան բատալիոնով յարձակում գործեցին։ Սկսվեց զարհուրելի կռիւ։ Կռւում էին սուիններով և սրերով։ Եապօնացի մի կապիտան սպանեց երեք ռուսի, բայց յետոյ ինքը ընկաւ սուինի հարուածից, որ խրվեց նրա կոկորդը։ Վերջ ի վերջոյ ռուսները յետ մղվեցին։

ՇԱՆԴՀԱՅ։ Երբ ռուսները յետ էին քաշվում Մուկդէնից դէպի հիւսիս, եապօնացիները բռնեցին անգլիական նաւատորմի կապիտան Էյրիսին, ամերիկական զինուորական վիրաբոյժ Գէրբէրգին և կապիտան Գուդսոնին։—Ասում են, թէ գեներալ Ցէրպեցկին վիրաւորված է։—Լուր է պատում, թէ Տէլինը առնված է։ Ռուսաց զօրքի մի մասը փորձում է անցնել դէպի Գիրին։ Պաշարման թնդանօթները, որոնք բերված էին Պօրտ-Արտուրից, ահագին կորուստներ պատճառեցին նահանջող ռուսներին։

ՍԻՆԳԱՊՈՒՐ։ «Բօնվան» շոգենաւը հաղորդում է, որ մարտի 1-ին կէս գիշերին լոյս մարտի 2-ը նա տեսել է 22 եապօնական նաւեր Պորսբուրգ փարոսի մօտ։ Եապօնական նաւատորմից երկու օֆիցէր ափ իջան։ Նրանք խորհրդակցում էին եապօնական հիւպատոսի հետ։ Նաւատորմը շուտով կը հեռանայ այդտեղից։ Լրագրի թղթակիցը այցելեց ծովապետի նաւը։ Օֆիցէրները չափազանց սակաւախօս են։ Նրանք ուրախութիւն յայտնեցին Մուկդէնի ճակատամարտի վերաբերմամբ։ Նաւատորմի գնալու տեղը գաղտնի է պահվում։ Հաւանական է, որ նա կանցնի դէպի Զօնդի նեղուցը։

ԱԹԷՆՔ, 2 մարտի։ Թագուհին երեկոյեան մեկնեց Կրէտէ, ուր՝ իբր ռուս նաւատորմի պատւաւոր ծովապետ, կը գնէ ծովապետ երկրորդ օգնական Ներօգատովի էսկադրան։—Գրուսական Ատալբերտ պրինցը ժամանեց Գիրէա։

ԽՐԻՍՏԻԱՆԻԱ, 3 մարտի։ Պարլամենտի նիստում մինիստր-նախագահ Միքէլսենը յայտնեց, որ ներկայ կաբինէտը կազմված է նրա համար, որ կեանքի մէջ գործադրէ Նորվէգիայի սահմանադրական իրաւունքը սեփական հիւպատոսութիւններ հիմնելու։ Նորվէգիական ժողովուրդն աւելի բարձր ցանկութիւն չունի քան այն, որ ուզում է ապրել բոլոր ժողովուրդների հետ խաղաղութեան մէջ և մանաւանդ շվեդացիների հետ, և ուզում է ազգի բոլոր ուժը գործ ածել նիւթական բարօրութեան զարգացման վրա, Պարլամէնտի նախագահը վստահութիւն յայտնեց, որ պարլամէնտը կը պաշտպանէ կաբինէտին այդ ծանր խնդիրն իրագործելիս։

ՎԻԵՆՆԱ։ Աւստրօ-Ունգարան մաքսային տարիֆը, որ ծառայում է հիմք բոլոր առևտրական դաշնագրերին, այս ամսի ընթացքում էլ մի անգամ խորհրդածութեան կը տրվի։ Տարիֆի ընդունվելը ըստ երևոյթին արդէն ապահով է։

ԻՆՍԲՐՈՒԿ։ Կայսերական հրամանով կը դադարեցնեն այն բոլոր անձերի դէմ դատական գործերը, որոնք մասնակցութիւն են ունեցել Ինսբրուկի դէպքերի մէջ։

ՀՌՕՄ։ Նոր դժուարութիւններ ծագելու պատճառով՝ Ֆօրտիսը հրաժարվեց նոր կաբինէտ կազմելուց։ Տիտտոնին ժամանակաւորապէս ընդունեց իր վրա կաբինէտի ղեկավարութիւնը։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 2 մարտի։ Բուզվէլտը արգելեց ռուսական «Լենա» փոխադրանաւի կարկատում. նաւը գտնվում է Սան-Ֆրանցիսկօում մասնաւոր նաւաշինարանում. նա հրամայեց, որ այդ կարկատումը կատարվի պետական նաւաշինարանում, որպէս զի անհնար դարձվի շոգենաւի գաղտնի փախուստը։—Ռուս կառավարութիւնը կարգադրութիւն է արել, որ

ռազմաթերքներն այլ ևս Միացեալ-Նահանգներում չը գնվեն։ Նիւ-Եորքից և Սան-Ֆրանցիսկոից ահագին քանակութեամբ բեռներ են ուղարկված Ռուսաստանի համար. իսկ դեռ չը շինված պատուէրները ոչնչացված են գործարանների հետ փոխադարձ համաձայնութեամբ։

ՋԷՄԼԻՆ, 2 մարտի։ Վաղը փակվում է ըստ կուպչինայի նստաշրջանը։ Վերջին սկանդալների գործած վատ տպաւորութիւնը ոչնչացնելու համար, այսօր կը կայանայ մեծ հրաժեշտի ճաշ ի պատիւ պատգամաւորների։ Ճաշի ժամանակ կարտասանվի ճառ, որի մէջ Նորից յայտնված կը լինի վստահութիւն Պաշիչին և դատապարտութեան կենթարկվի պատասխանատուութիւն չը կրող զանազան անձանց հակառահանդարական ազիտացիան։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-ադիւտանտ Կուրոպատկինի հեռագիրները Նորին Կայսերական Մեծութեան Անունով 1905 թի մարտի 1-ից. «Այսօր առաւօտ եպօնացիների յարձակումն յետ մղելուց յետոյ ուրիշ զեկուցումներ չեն ստացված պատերազմական ընդհարումների մասին։ Իրանց զօրամասերից առանձին հեռացած կոմանդաները և առանձին զինուորները վերջին երկու օրվայ ընթացքում վերադարձան իրանց զօրքերի շարքերը։ Սայլախմբերը մասամբ կարգի են բերված։ Առաջին կարգի սայլախմբերը մեծ մասամբ դտնվում են արդէն զէյերի մօտ։ Զէրբերը ապահովված են կերակրով։ Կօլպուները պատրաստ են Նորից կուռելու համար։ Դեռ լիակատար զեկուցումներ չունեմ սպանվածների, վիրաւորների և անհետ կորածների մասին, նոյնպէս և արտիլէրիայի ու սայլախմբերի կորուստների մասին։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»։—2) Ներկայ տարվայ մարտի 2-ից. «Զօրքերն անցնում են մեծ կարգապահութեամբ Տէլինի մօտով։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»։—3) Աչքի անցրի 14 հետևակ դիվիզիայի մասերը։ Աշխոյժ տեսք ունէին։ Մինչև իմ հեռանալը Տէլինից կռիւ չէր սկսվել։ Ճանապարհին դէպի հիւսիս ես տեսայ շատ զօրամասեր և սայլախմբերը, որոնք ընթանում էին կատարեալ կարգապահութեամբ։ Տեսայ նոյնպէս Ռուսաստանից էլնց նոր եկած գնդերը, որոնք ինձ զեղեցիկ ներկայացան։ Վերոգրեալի մասին ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Գուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

ՀԻԿՕՂԱՆԻ—9—10 ժ. առքի. ներքին և նեարդային
Ս. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ—10—11 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Դ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ՍԱՂՕԼՕՎ ատամնաբոյժ. 9—11 ժ.
ԿԻՆ-ԲԺԻԶԿ ՁԵՐԲԻՆԻՆ—1½-2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Գ. Ա. ԹԱՐԽԱՆԵԱՆՑ—7½—8 ժ.
Պ. Ա. ԱՐԳԱՋԻԱՆԻ. Կատարում է միկրո-քիմիական և բակտերիոգրաֆական հետազօտութիւններ։
Օ. Ա. ԱՒՎԱՆԻՏԱԿԻ—տանը. ծաղկահատ և բժշկական տարմատարդ. դիմել 11—1 ժ.։
Վճարը 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցում ընդունվում են և գիշերօթիկ հիւանդներ։

Հիւանդանոցի կառավարիչ՝ Բժ. Կ. Ի.

Լոյս տեսաւ մամուլի տակից

ԱԿՆԱՐԿՆԵՐ ՈՒԴԻԱՑԻ և ՄԱՀՄԵԴԱԿԱՆ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Գինն է 40 կօպ.

ճանապարհածախսով 50 կօպ.

Դիմել Թիֆլիսում «Գուտտենբէրգ» գրավաճառողին, Ս. Ռ. Դօվլաթեանին, Ս. Կ. Կաֆիեվին, Յ. Մելիք-Զանեանցին (Բեհբութեար փողոց), իսկ Սիմֆերոպոլում՝ (Ղրիմ) հեղինակին այսպէս.—Симферополь, священ. Г. Овсепьянъ. Ե. Հ. 6—15

ԲԺՇԿԱՊԵՏ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՕՎ

Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։

Б. Садовая, 136, д. Бакалова.

(ռ. կ. ե. հ.) 88—100

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային և սիֆիլիտիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6 ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 20.

(ռ. կ. ե.) 16—30

ԲԺՇԿԱՊԵՏ

Ս. Յ. ՔԱԹԱՆԵԱՆ

ներքին և ջղային հիւանդութիւններ։ Ընդունելութիւնը ամեն օր առաւօտեան 9—12 ժամը և երեկոյեան 5—7 ժամը։ Веляминовская ул. домъ Сафарова № 13 рядомъ съ III гимназіей. 7—20

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

նախկին օդիցեր Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Ընդունում է յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին։ Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 6—8 ժամին երեկոյեան։ Բարշչևկի փող. № 1, «պօժարնի կոմանդի» դիմացը. տելէֆոն № 11. (ա. օ.) 10—10

ԲԺԻՇԿ Ա. ՄԻԽԻԹԱՐԵԱՆՑ

Ընդունում է սանսնաւորապէս սիֆիլիս, մորթու և վեներական ախտ ունեցող հիւանդներ ամենայն օր, առաւօտ. 12—2. երեկոյեան 6—8 Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանօվի, դեղատան կից։ (տ. օ.) 28—80

Վաճառվում են

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

Երկու նոր աշխատութիւններ

I

ՍԷՐ ԵՒ ԽԱՆԴ (սի պատկերով) 20 կ.

II

ԱՆԱՌԱԿՈՒԹԻՒՆ և ՊՈՌՆԿՈՒԹԻՒՆ 20 »

Դիմել՝ Թիֆլիսում «Գուտտենբէրգ» և «Կենտրոնական» գրավաճառանոցները, իսկ Բագուում՝ «Сотрудникъ» գրավաճառանոցը։ 18—25

ԱՏԱՄՆԱԲՈՑԺ

Ս. Ա. Ստեփանեան

Ընդունում է առաւօտեան 9—2 և 5—7, Վելեամինսկայա փ. № 8.

1000

Հայ գործիչների նկարներով ԲԱՑ-ԲԱՄԱԿՆԵՐԻ արժէքը յատկացված է յօգուտ Բագուի վայրագութիւնների զոհ գնացած թշուառ ընտանիքների օգտին։ Ստացված գումարները ցուցակով կը յանձնվեն «Մշակի» խմբագրութեան.

Դիմել. «Централь-Постъ-Картъ» М. Гнуни, Михайловская 38. Կ. Չ. Ռ. 9—10

№ 4711

CAPTOL

„ԿԱՊՏՕԼ,,

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՄԵՆԱԼԱՒ ԶՈՒՐԸ.

մաքրելու, թարմացնելու, ամրացնելու գլխի կաշին, ջղերը կենդանացնելու։ Մանաւանդ գլխի թեփի և նրա հետ միացած քորի և մազերը թափվելու դէմ։ Պատրաստված է Էլբէրֆէլդի բժշկապետ Ի. Էյխոֆֆի ցուցումով։ «Կապտօլ»-ը չէ կազմում գաղտնի միջոց։ Միակ գործարանատէրը Ֆերդ. Միւլլէնս, Կեօլն և Բիգա։

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԱԾՈՒԹԵԱՆ Արքունիքի մատակարար։

(Հ. 8, Ն. 13, Դ. 8, Յ. 5, Փ. 23, Ա. 23,

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻՊԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Արտիստական ընկերութեան թատրոնում

Երկուշաբթի, մարտի 7-ին

Հայոց դրամատիպական ընկերութեան խումբը մասնակցութեամբ տիկ. Սիրանոյշի և պ. Պետրոսեանի կը ներկայացնէ

ԴԱՌԱՃԱՆՈՒԹԻՒՆ

պատմական դրամա 5 գործ. հեղ. Սուքրաթօվի թարգմ. Զալալ Տէր-Գրիգորեանի։

Մասնակցում է ամբողջ խումբը։

Սկիզբն է ժամը 8-ին երեկոյեան։

Տեղերի գները սովորական են։

Հիգշաբթի, մարտի 10-ին կը ներկայացնէ ի նպաստ տ. Մայսուրեանի «Օգա Բէրնդ»—Հաուպտմանի։

Հերթապահ անդամ վարչութեան՝ Ռ. Յովհաննիսեան

(շ. կ.) Բէժիսսեօր՝ Յ. Աբէլեան

Այս յայտարարութիւնը տպված է «Правитель. Вѣстникъ»-ի № 43 1903 թ.։

Զգուշացիք կեղծումներից

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ

Դեղագործ

Ի. Ֆ. ԻՒՐԳԷՆՍԻ

Ոչնչացնում է պղուկները, այրվածքները, դեղին բծերը, ուռոյցքները և ազդում է աւելորդ քրտնաբերութեան վրա. ոչնչացնում է վատ հոտը։ Յանձնարարվում է իբր տուալէտի անուշահոտ սապօն բարձրագոյն տեսակի։

Ոսկի մեդալ Լօնդոնում 1893 թ. Կտորի գինը 50 կ., ½ կտորը 30 կ.։ Ծախվում է բոլոր ամենալաւ դեղատներում, դեղապահեստներում և անուշահոտութիւնների խանութներում։

Բոլոր Ռուսաստանի համար գլխաւոր պահեստը Գ. Ֆ. Իւրգէնսի մօտ Մոսկվայում։ (4, 19) 3—24

Տպագրվում է եւ մայիսի վերջերին լոյս կը տեսնէ

ԼԷՕ

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԵՐԿՈՐԴ ՀԱՏՈՐ (1878—1892), պատկերազարդ, մօտաւորապէս 600 երես։ Մինչև տպագրութեան վերջանալը շարունակվում է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ։ Երեք հատորը անկազմ՝ 3 բուբլի, ճանապարհածախսով 4 բուբլի. կազմած՝ 4 բ., ճանապարհածախսով 5 բ. 20 կ.։

Տպագրութիւնից յետոյ գինը կը լինի (անկազմ) 4 բ. 50 կօպ. առանց ճանապարհածախսի։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդագրութիւն ընդունվում է միմիայն «Գուտտենբերգ» գրավաճառանոցում։ Դրսից դիմում են՝ Тифлисъ, книжный магазинъ «Гуттенбергъ». 4—10

„ԶԱԹԱՑ“

Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը

խնդրում է բոլոր կրէդիտօրներին մինչև մարտի 15-ը ներկայացնել Ընկերութեան Վարչութեանը, Թիֆլիս քաղաքում (Վելիամինովսկի փողոց, տուն Խանկալաեանի), հաշիւները և դոկումէնտները՝ վերջնական հաշիւը կարելու համար։ (4, 9, 12) 1—3

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Նրանց կեանքը և գործերը (նմուշներով)

I Բանաւոր գրականութիւն. Գողթան երգեր, ժողովրդական երգեր, աշուղի երգեր, Սայաթ-Նովա։

II Գրականութիւն. Տառերի գիւտը (Սահակ, Մեսրոպ)։

Գրականութիւնը V դարում. (Բիւզանդ, Ագաթանգեղոս, Եղիշէ, Խորենացի, Փարպեցի և այլն)։

Հ. գրականութիւն արաբական շրջանում. Կաղանկատվացի, Յովհ. կաթող. Թովմա Արծրունի, Ասողիկ. Լաստիվերտցի և այլն։

Հ. գրականութիւնն Ռուբինեանց օրով. Բանաստեղծութիւն, պատմագրութիւն և վարդապետական գրուածներ։

III Անկման շրջան. Քուչակ նահապետ և երգերը։

IV Վերածնունդ. Մխիթարեաններ (Վենետկի և Վիեննայի), Ալիշան, Պէշիկթաշլեան, Դուրեան, Պարոնեան, Սրուանձտեան, Ծերենց և այլն։

Արեւելեան բաժին. Աբովեան, Նազարեան, Նալբանդեան, Ռ. Պատկանեան, Շահազիզ, Պոլշեան, Գ. Բարխուդարեան, Սունդուկեան, Ադայեան, Բաֆֆի, Շիրվանզադէ, Մուրացան, Լէօ, Ահարոնեան, Պալասանեան, Երիցեան, Յ. Յովհաննիսեան, Ծատուրեան, Թումանեան, Իսահակեան, Շանթ և այլն։

Միջնակարգ դպրոցների համար կազմեց Գ. Վանցեան, գինն է 1 բուբլի, ճանապարհածախսով 1 բուբլի 30 կօպէկ։

Դիմել՝ Թիֆլիս. Коммерческое учил. Ванціанъ կամ Թիֆլիսի գրավաճառներին։ 6—11

Պրոֆիզոր Ա. ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆՑԻ

ԲՕՐՕ-ՆԱՖԹԱԼԱՆ

Նոր նիւթը

Կատարելապէս ոչնչացնում է գլխի թեփը, ամրացնում է մազերը և օգնում մազերի բսնելուն. տալիս է մազերին իրանց բնական ու հաստատ տեսքը։ Թոյլատրված է բժշկական վարչութիւնից, իբրև ոչ մի քաղաքակար նիւթ չը պարունակող։

Պահեստարան Кавказское Товар. торговл. аптек. товарами Въ Тифлисѣ, Баку, Батумѣ, վաճառվում է և Ռուսաստանի դեղատներում և դեղավաճառատներում։

Արժէքն է 1 բուբլի 25 կօպէկ։

(շ. 1 ան.) 35—50

ԳՆԵՑԷՔ ՄԻԱՑՆ

ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԱԾ

ԳԼԻՑԷՐԻՆԻ ՍԱՊՕՆ

Բրօկար եւ Ըակ.

(10) հաստատութեան 7—10

Разрѣшено цензурою. Тифлисъ, 3-го Марта 1905 г. Электропечатня типографскаго Т—ва „Гермесъ“. № 15